



Ministry of Justice of Armenia



The project is financed by
the European Union



The project is implemented by IBF

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատավորների թեկնածուների միջև սեռային (գենդերային) հավասարակշռության մասին որոշման նախագծով նախատեսվող գործողությունների ծրագրի և «Դատավորի վարքագծի կանոնները» սահմանելու մասին որոշման նախագծի վերաբերյալ անցկացվող հանրային քննարկման

Քաղաք Երևան

քսանինը օգոստոսի, երկու հազար տասնչորս թվական

Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակում օգոստոսի 29-ին Կոնգրես հյուրանոցի «Պիկասո» սրահում ՀՀ արդարադատության նախարարությունն անցկացրեց հանրային քննարկում՝ Դատավորների թեկնածուների միջև սեռային (գենդերային) հավասարակշռության մասին որոշման նախագծով նախատեսված գործողությունների ծրագրի և «Դատավորի վարքագծի կանոնները» սահմանելու մասին որոշումների նախագծերի վերաբերյալ:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Արտյոմ ԳԵՂԱՄՅԱՆ՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Աննա ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ՝ ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ

Նելլի ԳԱՍՊԱՐՅԱՆ՝ ՀՀ արդարադատության նախարարության Եվրաինտեգրման և զարգացման բաժնի պետ

Հովհաննես ՀՈՎԱԿԻՄՅԱՆ՝ ՀՀ ԱՆ «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կրտսեր մասնագետ

Վիզեն ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ «Իրավունքի հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն

Արման ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ «Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպություն

Արթուր ՍԱՔՈՒՆՑ՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն

Ռիմա ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ՝ «Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպություն

Սիրանուշ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ՝ ԵՄ «Budget Support» ծրագրի ներկայացուցիչ

Մարգարիտա ՀԱԿՈՐՅԱՆ՝ ՀՀ ԱՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի փորձագետ

Քննարկումն արձանագրեց ՀՀ արդարադատության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ **Լուսինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ:**

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բացման խոսք՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արտյոմ **ԳԵՂԱՄՅԱՆ**

2. Թեմա՝ «Դատավորի վարքագծի կանոնները» սահմանելու մասին ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի որոշման նախագիծ: Զեկուցող՝ ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ Աննա **ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

3. Թեմա՝ Դատավորների թեկնածուների միջև սեռային (գենդերային) հավասարակշռության մասին ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշման նախագիծ: Զեկուցող՝ ՀՀ արդարադատության նախարարության Եվրասիանտեգրման և զարգացման բաժնի պետ Նելլի **ԳԱՍՊԱՐՅԱՆ**

4. Հարցուպատասխան

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ **Ա.ԳԵՂԱՄՅԱՆԸ** ողջունեց հանրային քննարկման մասնակիցներին և նշեց, որ ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը մեծապես կարևորում է դատաիրավական համակարգի

բարեփոխումների ծրագիրը, և նման միջոցառումներն այդ բարեփոխումների մասն են կազմում: **Ա.ԳԵՂԱՄՅԱՆԻ** խոսքով՝ եվրոպական գործընկերների հետ իրականացվող «Աջակցություն դատական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում դատական իշխանության մեջ գենդերային հավասարակշռության ապահովումը կարևորագույն պահանջներից մեկն է: Ըստ նախարարի տեղակալի՝ ցանկացած պետական կառավարման և այլ համակարգերում կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը պետք է լինի ողջամիտ:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑ՝

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԸ, ներկայացնելով «Դատավորի վարքագծի կանոնները» սահմանելու մասին ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի որոշման նախագիծը, նշեց, որ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովը, ընդունելով, որ դատավորը պարտավոր է դրսևորել վարքագծի բարձր չափանիշներ և իր վարքագծով ամրապնդել կողմերի, իրավաբանական հանրության և հասարակության հավատը դատավարության, դատավորի և դատարանի անկախության, անկողմնակալության և արդարության հանդեպ, ընդունելով, որ արդարադատությունը ոչ միայն պետք է իրականացվի, այլև լինի տեսանելի, համոզիչ և ընկալվի որպես արդարության հաստատում, որոշել է սահմանել Հայաստանի Հանրապետության դատավորի վարքագծի կանոնները:

Համաձայն որոշման նախագծի՝ դատավորն արդարադատություն իրականացնելիս անկախ է և ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ ներպետական և միջազգային օրենսդրությամբ, ինչպես նաև սույն վարքագծի կանոններով: Դատավորը պարտավոր է բարձր պահել իր պատիվն ու արժանապատվությունը և խուսափել այն ամենից, ինչը կարող է արատավորել դատական իշխանության հեղինակությունը, նվազեցնել հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ, վնաս հասցնել դատավորի համբավին, կասկածի տակ դնել նրա օբյեկտիվությունը և անկախությունը արդարադատություն իրականացնելիս: Դատական նիստից դուրս դատավորը պարտավոր է ձեռնպահ մնալ կողմերի և դատավարության այլ մասնակիցների հետ առանձին շփումից և այլն:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ խոսքով՝ Արդարադատության իրականացմանն ուղղված պարտականությունների կատարումը դատավորի համար պետք է առաջնային լինի օրենքով նրան թույլատրված գործունեության այլ տեսակների նկատմամբ:

Դատավորը պարտավոր է բարեխղճորեն կատարել իր մասնագիտական պարտականությունները, այդ թվում՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները գործերի և նյութերի ողջամիտ ժամկետում քննության համար, որպեսզի կասկածներ չառաջացնի արդարադատության արդյունավետության նկատմամբ:

Դատավորը պարտավոր է նիստերը վարել օրենքով սահմանված հանդերձանքով, չմիջամտել ձայնագրման համակարգի անխափան աշխատանքին, պարտավոր է չարտահայտել իր դրական կամ բացասական վերաբերմունքը դատավարության կողմերի հանդեպ և չցուցաբերել այնպիսի վարքագիծ՝ միմիկա, ժեստիկուլյացիա, հեգնանք և այլն, որը դատավարության մասնակիցների կողմից կարող է ընկալվել որպես նախատրամադրվածության դրսևորում: Բերելով օրինակ՝ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆՆ** ընդգծեց, որ փաստաբաններից մեկը դիմել էր Դատական դեպարտամենտ՝ տեղեկացնելով, որ, երբ դատի ժամանակ վրդովված խոսել է, դատավորը ձեռքի ժեստի միջոցով հորդորել է հանգստանալ: Փաստաբանը պնդել է, որ այդ քայլը խոսում է անկողմանակալության մասին, քանի որ դատավորը, փորձելով հանգստացնել իրեն, խոչընդոտել է իր ազատ խոսքը: **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԸ** շեշտեց, որ այստեղ մենք ոչ թե գործ ունենք օրենքի խախտման հետ, այլ ունենք էթիկայի խախտման խնդիր:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ տեղեկացմամբ, արդարադատություն իրականացնելիս դատավորը չպետք է դրսևորի խտրականություն կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ համոզմամբ, դատավորը պարտավոր է միջոցներ ձեռնարկել նաև իր հմտությունների և անձնական հատկանիշների շարունակական կատարելագործման ուղղությամբ:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՐՑ՝

Ն.ԳԱՍՊԱՐՅԱՆԸ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ներկայացրեց Դատավորների թեկնածուների միջև սեռային (գենդերային) հավասարակշռության մասին ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշման նախագիծը և նշեց, որ 2014 թվականի օգոստոսի 20-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կին դատավորների թիվը կազմել է դատավորների ընդհանուր թվի 24%-ը, մինչդեռ ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավորների թեկնածությունների ցուցակը կազմելու ընթացքում հաշվի է առնվում սեռային (•ենդերային) հավասարակշռությունը, և եթե որևէ սեռի դատավորների թիվը պակասի դատավորների ընդհանուր թվի քսանհինգ տոկոսից, ապա այդ սեռի թեկնածուներին ցուցակում կերաշխավորվի առնվազն հինգ տեղ:

Ն.ԳԱՍՊԱՐՅԱՆԻ տեղեկացմամբ, 2014 թվականի հունվարի 21-ին ՀՀ Նախագահի կողմից ստորագրված թիվ ՆՀ-3-Ա հրամանագրով դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 20 անձից 7-ը կին է, սակայն Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը գտնում է, որ շարունակում է արդիական լինել կին իրավաբանների կողմից դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու հնարավորություններն ամրապնդելուն և ընդլայնելուն ուղղված շարունակական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը:

Ն.ԳԱՍՊԱՐՅԱՆԻ խոսքով՝ նշված միջոցառումների շարքում Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը կարևորում է իրավաբանական կրթություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություններում գենդերային հարցերի քննարկումը՝ ուսանողների շրջանում սեռային (գենդերային) հավասարության ընկալումը և հետագա ներկայացվածությունը խրախուսելու նպատակով: Այս կապակցությամբ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը կարևորում և անհրաժեշտ է համարում կին դատավորների և ուսանողների հանդիպումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կամ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կամ Հայաստանի Հանրապետության դատավորների միության և իրավաբանական կրթություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից համատեղ կազմակերպվող գիտաժողովներին,

սեմինարներին, կլոր սեղաններին, դասընթացներին, իրազեկման տարբեր ծրագրերին կին դատավորների մասնակցությունը:

ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ՝

Ա.ՍԱՔՈՒՆՅԸ նշեց, որ դեռ ծանոթ չէ դատավորների էթիկայի կանոնները սահմանող որոշման նոր նախագծին, բայց հույս հայտնեց, որ այդ կանոնները կազմելուց առաջ՝ հաշվի առնված կլինեն այն ռիսկերը, որոնք առկա են: Չնայած դրան՝ նա իր դժգոհությունը հայտնեց դատական նիստերի ժամանակ տիրող վիճակից, օրինակ բերելով «Շանթ Հարությունյանի գործով» վկա ոստիկանների՝ մուտքի սենյակից դահլիճ մտնելու հանգամանքը: Նրա խոսքով՝ բոլորն օնլայն ռեժիմով կարող են նստել և նայել, թե ինչ է կատարվում նիստերի ժամանակ և դրա վերաբերյալ հատուկ գրություն ուղարկելու անհրաժեշտություն ինքը չի տեսնում: Նրա խոսքով՝ միայն դատավորի վարքագծի կանոն մշակելով հարցը չի լուծվի, անհրաժեշտ է նաև այն աշխատեցնելու մեխանիզմներ մշակել: **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆՆ** օրինակին օրինակով պատասխանեց, նշելով, որ եթե հարեանը պատ է կառուցում ուղիղ ձեր պատուհանի դիմաց, «այդ մասին հենց դուք պետք է բարձրաձայնեք, այլ ոչ թե սպասեք, տեսնեք երբ են համապատասխան մարմինները դա նկատելու: Դուք պետք է մեզ օգնեք և աշխատեցնենք այդ մեխանիզմները»,- հորդորեց **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԸ**:

Ա.ՍԱՔՈՒՆՅԸ, ներկայացնելով իր մտահոգությունը, նշեց, որ մինչև դատական իշխանության անկախության համար անհրաժեշտ իրավական բազան չձևավորվի՝ դատավորի անկախության պահանջները կամ վարքագծի կանոնները չեն աշխատելու:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն ու ոլորտի այլ մասնագետներն իրենց առարկություններն ու առաջարկությունները ներկայացրին դատավորների թեկնածուների միջև սեռային հավասարակշռության վերաբերյալ գործողությունների ծրագրով նախատեսված դրույթների, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոններ սահմանելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- Քննարկված թեմաների վերաբերյալ բարձրաձայնված առաջարկները գրավոր ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարությանը՝ press@moj.am էլեկտրոնային հասցեով:

Արձանագրությունը բաղկացած է 7 էջից:

Նիստը նախագահող՝

Ա.ԳԵՂԱՄՅԱՆ

